Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Նոնա Բուդոյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Արաբական Միացյալ Էմիրություն (Դուբայ), 2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 13-ը
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 28-րդ համաժողովին, ինչի շրջանակներում անցկացվում էր նաև համաշխարհային առաջնորդների գագաթաժողովը: Գագաթաժողովի նպատակն էր աշխարհի պետությունների ու կառավարությունների ղեկավարներին ընձեռել հնարավորություն՝ ներկայացնելու իրենց դիրքորոշումը և իրենց երկրի տեսլականը կլիմայի փոփոխության վերաբերյալ:
   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» կողմերի համաժողովները տեղի են ունենում ամեն տարի՝ հանդիսանալով կլիմայի փոփոխության վերաբերյալ որոշումների կայացման միակ բազմակողմ ֆորումն աշխարհում՝ աշխարհի բոլոր երկրների գրեթե ամբողջական անդամակցությամբ: Ֆորումների ժամանակ աշխարհը համախմբվում է՝ համաձայնեցնելու կլիմայական ճգնաժամը լուծելու ուղիները, ինչպիսիք են գլոբալ ջերմաստիճանի բարձրացման սահմանափակումը մինչև 1.5 աստիճան ցելսիուս, օգնել խոցելի խմբերին հարմարվել կլիմայի փոփոխության հետևանքներին և մինչև 2050 թվականը հասնել արտանետումների զրոյական մակարդակի:
   Կողմերի համաժողովին մասնակցում էին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) 198 կողմ երկրներից ավելի քան 154 պետության ղեկավարներ և ավելի քան 70,000 պատվիրակներ՝ այդ թվում կառավարության, քաղհասարակության, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարեգործներ, երիտասարդներ, գիտնականներ, գործարարներ, բնիկներ:
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի կողմերի համաժողովի առաջնորդների գագաթաժողովի ընթացքում, ուղեկցել եմ շրջակա միջավայրի նախարարին և մասնակցել հետևյալ հանդիպումներին.

- ✓ **Կանաչ կլիմայի հիմնադրամի Երկրների համագործակցության հարցերով տնօրեն Կարոլինա Ֆուենտեսին և փոխտնօրեն Նոնհլանհլա Զինդելայի հետ:** Հանդիպման ընթացքում հիմնադրամի ներկայացուցիչները դրական են գնահատել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը հիմնադրամի աջակցությամբ իրականացնում է տարբեր ծրագրեր: Նախարարը գործընկերներին հրավիրել է Հայաստանի Հանրապետություն՝ տեղում ծանոթանալու ընթացիկ իրավիճակին և քննարկելու համագործակցության ավելի լայն հնարավորություններ:
- ✓ **«Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի (UNCCD) COP15 նախագահ Ալան Ռիչարդ Դոնվահիի ղեկավարած պատվիրակության հետ:** Շրջակա միջավայր նախարար Հակոբ Սիմիդյանը նշել է, որ Հայաստանը հավատարիմ է կոնվենցիայի սկզբունքներին և որ կառավարությունն իր կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում կարևորում է հողերի դեգրադացիայի չեզոքացմանն ուղղված աշխատանքները՝ սահմանված պարտավորությունները կատարելուն ուղղված համահունչ ծրագրեր մշակելով: Նախարարը շեշտել է, որ բարձր է գնահատում կոնվենցիայի քարտուղարության և միջազգային գործընկերների հետ հարաբերությունները՝ միտված միասնական ջանքերով հողերի դեգրադացիայի կանխման խնդրին. մասնավորապես՝ մինչև 2040 թվականը հողերի չեզոք դեգրադացիայի հասնելու թիրախին ձգտելու համար Հայաստանի Հանրապետության կողմից նախատեսված քայլերը՝ 2000-2010 թվականներին կորցրած ածխածնի պաշարները վերականգնելու և ներկայիս համեմատ 2,8%-ով ավելացնելու համար: Նախարարը գործընկերներին է ներկայացրել կլիմայական օրակարգում անապատացման ու երաշտի կանխարգելմանն ուղղված Հայաստանի Հանրապետության ձեռնարկած քայլերը՝ անդրադառնալով անտառտնկման և անտառային տարածքների ավելացման, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և բնական ռեսուրսների խելամիտ օգտագործման հարցերին: Անդրադարձ է կատարվել անտառվերականգնման ծրագրերին: Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը շեշտել է, որ բոլոր ծրագրերի կյանքի կոչման ճանապարհին Շրջակա միջավայրի նախարարությունը բարձր է գնահատում միջազգային գործընկերների հետ միասնական շրջանակների ամրապնդումը՝ առաջնային համարելով փորձի փոխանակումը և կարողությունների զարգացման հնարավորությունները:
- ✓ **ԱԱԳ Գործընկերության աջակցման գրասենյակի գլոբալ տնօրեն Պաբլո Վիեյրայի և Երկրների ներգրավվածության հարցերով տնօրեն Մարիանա Պանունսիո-Ֆելդմանի հետ:**

«Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» (ԱԱԳ) արդյունավետ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը միացել է ԱԱԳ գործընկերությանը 2018 թվականի օգոստոսին:

Հանդիպման ընթացքում նախարարը գործընկերներին է ներկայացրել ոլորտում մեկնարկած օրենսդրական բարեփոխումները և մասնավորապես անդրադարձել շրջակա միջավայրի ոլորտում վերահսկողությունը պատշաճ իրականացնելու նպատակով ստեղծվող Շրջակա միջավայրի պահպանության ծառայությանը:
Հիմնվելով երկրների առաջնահերթությունների և կարիքների վրա՝ ԱՍԳ գործընկերությունն առաջարկում է փորձագիտական, տեխնիկական և ֆինանսական աջակցության համապատասխան փաթեթներ: Այս համագործակցային ձևաչափը զարգացող երկրներին ապահովում է մուտք դեպի ռեսուրսների լայն շրջանակ կլիմայի փոփոխության մեղման և հարմարվողականության համար, ինչպես նաև նպաստելու է ավելի «արդարացի» և կայուն զարգացմանը:
Հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվել են շարունակել հանդիպումները և քննարկումները՝ ի նպաստ ոլորտում բարեփոխումների կայացման:

- ✓ **Երկկողմ հանդիպում է կայացել Հարմարվողականության հիմնադրամի ղեկավար Միկո Օլիկայնենի հետ**: ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը 2016 թվականին հավատարմագրվել է որպես հիմնադրամի 25-րդ Ազգային իրականացնող մարմին՝ դառնալով Արևելյան Եվրոպայի և Հարավային կովկասի առաջին երկիրը: Հավատարմագրումը հնարավորություն է ստեղծել Հայաստանի Հանրապետությանը մշակել հարմարվողականության և կայունության կոնկրետ ծրագրեր կլիմայի նկատմամբ իր առավել խոցելի համայնքների համար, ինչպես նաև ապահովել պոտենցիալ մոդելներ, որոնք տարածաշրջանի այլ երկրները կարող են ընդօրինակել:
Նախարարը անդրադարձել է Հարմարվողականության հիմնադրամի հետ համագործակցությանը՝ այն որակելով արդյունավետ և արդյունքահեն: Հանդիպման ընթացքում կողմերը ևս մեկ անգամ կարևորել են կլիմայի փոփոխության դեմ պայքարի շրջանակում գլոբալ և տարածաշրջանային բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների և ծրագրերի իրականացումը:
- ✓ **Ճապոնական կողմի նախաձեռնությամբ հանդիպել եմ Ճապոնիայի շրջակա միջավայրի նախարարի տեղակալ պրն. Յուտակա Մացուզավայի հետ**: Քննարկվել է ջերմոցային գազերի արտանետումների համար պատասխանատու ոլորտներում երկկողմ համագործակցության հնարավորությունների ընդլայնման հնարավորությունները, հաշվի առնելով, որ և Հայաստանի Հանրապետությունը և Ճապոնիան նպատակադրվել են մինչև 2050 թվականը հասնել կլիմայական չեզոքության: Երկկողմ հետաքրքրության ոլորտներն են՝ էներգետիկան (այդ թվում տրանսպորտը) արդյունաբերական պրոցեսները, գյուղատնտեսությունը, թափոնները և անտառային տնտեսությունը: Քննարկվել է Ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու ոլորտում Համատեղ վարկավորման մեխանիզմի (Joint Crediting Mechanism) մասին համագործակցության հուշագրի նախագիծը, ինչը Ճապոնիայի կառավարության նախաձեռնությունն է: Պարոն Յուտակա Մացուզավան տեղեկացրել է, որ մինչ այժմ նշված մեխանիզմի ներքո ամբողջ աշխարհում 27 գործընկեր երկրների հետ իրականացվել է 232 ծրագիր: Համատեղ վարկավորման մեխանիզմի նպատակը Փարիզյան համաձայնագրով նախատեսված թիրախներին հասնելու ուղղությամբ քայլերի ձեռնարկումն է, մասնավորապես Ճպոնական տեխնոլոգիաների փոխանցումը զարգացող երկրներին՝ ածխածնային կրեդիտների դիմաց:

Տեղեկացրել եմ, որ Հայաստանի Հանրապետությունում այս գործընթացի համար չկան օրենսդրական կարգավորումներ և շրջակա միջավայրի նախարարությունը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ նախաձեռնել է ուսումնասիրություն, ինչի վերջնարդյունքը պետք է լինի ենթաօրենսդրական իրավական ակտի նախագիծը՝ վերոնշյալ գործընթացը կազմակերպելու համար:

- ✓ **Ասիական զարգացման բանկի կենտրոնական գրասենյակի հրավերով մասնակցել եմ բազմակողմ զարգացման բանկերի տաղավարում միջոցառմանը, և ներկայացրել եմ Հայաստանում առկա կարգավորումները Չափողականության, հաշվետվայնության և հավաստագրման վերաբերյալ:** Վերոնշյալ համակարգի հիմնումը հանդիսանում է Կառավարման 5-ամյա միջոցառումների ծրագրի կետ, և միջազգային գործընկերների աջակցությամբ այժմ աշխատանքները ընթացքի մեջ են: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ մշակվում է էներգետիկայի և թափոնների ոլորտում ՉՀՀ համակարգը, որպեսզի հետո մաս կազմի ամբողջական համակարգի, ինչը իրականացվում է ՄԱԿ զարգացման ծրագրի աջակցությամբ:
- ✓ **Մասնակցել եմ Արևելյան եվրոպայի տարածաշրջանային խմբի թվով 4 հանդիպումներից 3-ին: Քննարկվել է COP29-ի հյուրընկալության հարցը և թեկնածությունները՝ թեմատիկ աշխատանքային խմբերի և բյուրոների համար: Հայաստանի կողմից առաջադրվել է 7 թեկնածություն: Հաշվի առնելով, որ տարածաշրջանը բարդ քաղաքական իրավիճակում է, վերջնական որոշում չի կայացվել: Որոշում է կայացվել COP 29-ի հյուրընկալության հարցով և ընտրվել են Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի համանախագահները:**
- ✓ Մասնակցել եմ մի շարք կողմնակի միջոցառումների, այդ թվում՝
- ✓ Շրջակա միջավայրի նախարարության և ՄԱԶԾ-ի համատեղ կազմակերպած «Հայաստանի ներդրումը Փարիզյան համաձայնագրի իրականացման գլոբալ առաջընթացին. ԱՍԳ իրականացման ընթացքը» թեմայով կողմնակի միջոցառմանը,
- ✓ Ջերմոցային գազերի գույքագրման ինստիտուտի կողմից ստացել եմ հրավեր և մասնակցել ջերմոցային գազերի գույքագրման թեմայով վերապատրաստում անցած շրջանավարտների համար կազմակերպված միջոցառմանը,
- ✓ Կլիմայի փոփոխության կենտրոնի կողմից կազմակերպած «6-րդ հոդվածի գործառնականացում» խորագիրը կրող միջոցառմանը,
- ✓ Միջազգային թափանցիկության նախաձեռնության կողմից կազմակերպած «Գլոբալ գույքագրում և կլիմայի հաշվետվողականություն. կլիմայական ֆինանսական խնդիրների վերհանում» թեմայով միջոցառմանը,
- ✓ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարության կողմից կազմակերպած «Թափանցիկության հիմնական գործիքների ներկայացում՝ ընդլայնված թափանցիկության շրջանակի բարելավման նպատակով» թեմայով միջոցառմանը,
- ✓ Կայուն կլիմայական ֆինանսների վերաբերյալ ֆորումին,
- ✓ Կայուն նորարարական ֆորումին,

✓ Ագրոպարենային համակարգերի վերաբերյալ հանդիպմանը, ինչը կազմակերպվել է Կլիմայական Գործողությունների կողմից ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ համատեղ,

✓ Գլոբալ ջրային գործընկերության և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության համատեղ կազմակերպած «Ջրային ոլորտում կլիմայադիմակայուն ներդրումային կարիքների և հնարավորությունների» թեմայով միջոցառմանը, որտեղ Հայաստանը ներկայացրեց ոլորտում առկա խնդիրները, մարտահրավերները, ֆինանսական բացերը, ինչպես նաև ձեռնարկվելիք քայլերը կլիմայական դիմակայունությունը բարձրացնելու ուղղությամբ:

✓ «Նոր հավաքական քանակական նպատակի շուրջ» թեմայով երկխոսությանը,

✓ ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի կազմակերպած «Կլիմայական գործողությունների ակտիվացում տվյալների թափանցիկության և ֆինանսների միջոցով» թեմատիկ քննարկմանը,

✓ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ)-ի կողմից կազմակերպած «Կլիմայական ֆինանսավորման հասանելիության պարզեցում և ազդեցության ուժեղացում» խորագիրը կրող հանդիպմանը,

✓ Կլիմայական ցանցի կողմից կազմակերպած «Կլիմայական ֆինանսների թափանցիկություն. ներդաշնակեցված շրջանակ պետական և մասնավոր ֆինանսների մոբիլիզացման համար» թեմայով միջոցառմանը,

✓ և այլ հանդիպումների՝ ինչպես երկկողմ, այնպես է կողմնակի միջոցառումների:

**7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ճապոնիայի շրջակա միջավայրի նախարարի տեղակալի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ուշադրության կենտրոնում պահել Համատեղ վարկավորման մեխանիզմի հուշագրին միանալու հարցը և արագացնել գործողությունները դրա հետ կապված:

COP28-ի շրջանակներում Հայաստանը միացել է մի շարք միջազգային հռչակագրերի և խոստումների, այդ թվում՝

- Կայուն գյուղատնտեսության, դիմակայուն սննդի համակարգերի և կլիմայական գործողությունների վերաբերյալ հռչակագիր
- Կլիմայի և առողջության վերաբերյալ հռչակագիր
- Կլիմայի, օգնության, վերականգնման և խաղաղության վերաբերյալ հռչակագիր
- Գլոբալ վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության բարձրացման հանձնառություն
- Գլոբալ սառեցման հանձնառություն

Հայաստանը միացել է նաև Հանուն Ավելի Հավակնոտ Կլիմայական Գործողությունների Բազմակողմանի Գործընկերության (CHAMP) և Ղրղզստանի կողմից նախաձեռնած «Դեպի ծով ելք չունեցող լեռնային երկրների» նախաձեռնություններին՝ շարունակելով հանդիսանալ վերջինիս բանակցային խմբի անդամ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

- Կոնվենցիայի կողմ հանդիսացող երկրները ձեռք բերեցին համաձայնություն՝ կորուստների և վնասների հիմնադրամի գործառնականացման և ֆինանսական մեխանիզմների կարգավորումների վերաբերյալ: Որոշումը ընդունելուց հետո հիմնադրամի հանձնառությունը կազմում է ավելի քան 700 միլիոն դոլլար: Նաև որոշում ընդունվեց, որ կլիմայի փոփոխության կորուստների և վնասների հարցերով քարտուղարությունը կտեղակայվի ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման և ծրագրային ծառայությունների գրասենյակներում:
- Կողմերը համաձայնության եկան Հարմարվողականության Գլոբալ Նպատակների և դրա թիրախների շուրջ, ինչը ներառում է հարմարվողականության թիրախները, ֆինանսավորման կարիքները, տեխնոլոգիաները և կարողությունների զարգացումը:

Կլիմայական ֆինանսավորումը կարևորգույն տեղ էր զբաղեցնում համաժողովում:

- Նախորդ տարիների համեմատ, Կանաչ Կլիմայի հիմնադրամի երկրորդ համալրման համար նախատեսված ֆինանսավորումը կազմել է 12.5 մլրդ դոլար, ինչը համարվում է ռեկորդային ցուցանիշ:

Ութ դոնոր կառավարություններ հայտարարեցին նոր պարտավորվածությունների ստանձման մասին Ամենաքիչ զարգացած երկրների հիմնադրամի և Կլիմայի փոփոխության հատուկ հիմնադրամի և Հարմարվողականության հիմնադրամի նկատմամբ. մինչ նոր խոստումները վերոնշյալ հիմնադրամներին հատկացվելիք ֆինանսավորումը կազմում էր ընդհանուր ավելի քան 174 միլիոն դոլար, այժմ կազմում է մոտ 188 միլիոն դոլլար:

Նոր նպատակը, որի ֆինանսական հատկացումը տարեկան կազմելու է 100 մլրդ դոլար, դառնալու է հիմնական ֆինանսական աղբյուր կլիմայականի ազգային ծրագրերը նախագծելու և հետագա իրականացման համար, որոնք պետք է բախշվեն մինչև 2025 թ.:

- COP 28-ի բանակցությունները «ընդլայնված թափանցիկության շրջանակում» հիմք դրեցին Փարիզյան Համաձայնագրի իրականացման նոր դարաշրջանի: ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի քարտուղարությունը մշակում է թափանցիկության հաշվետվայնության գործիքներ երկրների համար, որոնք ներկայացվել և փորձարկվել են COP 28–ի ժամանակ: Հաշվետվայնության գործիքների վերջնական տարբերակը հասանելի կլինի մինչև 2024 թվականի հուլիսը:

Հաջորդ երկու տարիները կլինեն վճռորոշ: COP29-ին կառավարությունները պետք է սահմանեն կլիմայի նոր ֆինանսական նպատակներ, որոնք արտացոլելու են կլիմայի մարտահրավերին դիմակայելու անհապաղությունը: COP30-ին երկրները պետք է հանդես գան ազգային մակարդակով սահմանված գործողություններով, որոնք ընդգրկում են տնտեսության բոլոր ոլորտները և ամբողջ ջերմոցային գազերը:

- Կողմ երկրները հավանություն տվեցին COP29-ի անցկացումը 2024 թվականի նոյեմբերի 11-22-ը Ադրբեջանում, և COP30-ի անցկացումը 2025 թվականի նոյեմբերի 10-21-ը Բրազիլիայում

*Գործուղվող* *Նոնա Բուդոյան*

*20.12.2023*